

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Մատուրեանի խանութում

Ստորագրագրացիք գիմում են ուղղակի

Тифлис. Редакция „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Ցայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

1878 թ-ից

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԸՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերէն:

Լրագրի դիւրը և պրօգրամման նոյն են մնալու: Մենք կը ստանանք ՍԵՓԵՆԿԱՆ ՀԵՌԵՆԻՐՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ԱԶ և պ. ՄԱՏՈՒՐԵԱՆՑԻ խանութում:

ԸՄԵՆՁԻՆ ՀԵՄԵՐՆԵՐԸ կը ծախվին 5 կօպէկով հատր: Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛИСЪ Редакция „Мшакъ“:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

«Մշակ» թղթակիցներին.— Ն երբ ի ն տե-տե թիւն: Ներքին լուրեր: Արտաքին տեղեկութիւն: Աւստրիա: Քիւրքիա: «Մշակ» հեռագրեր: Ցայտարարութիւններ: Տեղեկացոյց: Բանասիրական: Մի ամիս կաթնատնտեսական ուսումնարանում:

ՄՇԱԿԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՆ

Ըմեն տարի մենք դիմել ենք մեր թղթակիցներին և ցոյց ենք տուել թէ ինչ բաների վրա և ինչպէս պէտք է գրել մեր լրա-գրին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԱՄԻՍ ԿԱԹՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ-ՆԱՐԱՆՈՒՄ

VII

Կաթնատնտեսական ուսումնարանի գնալու դիտարկութեան գլխաւոր նպատակն էր սովորել չվեյցարական պանրի պատրաստութիւնը: Բայց այդ չը յաջողվեցաւ ինչ անել, որովհետեւ արդէն երկու տարուց աւելի էր, որ այնտեղ թողել էին չվեյցարական պանրագործութիւնը: Դրա գլխաւոր պատճառը այն է եղել, որ չը նայելով բոլոր զգուշութիւններին, որ անում է եղել Վե-րեյնզալինը, չը նայելով որ պանրագործ վարպետներ բերվում են եղել նոյն իսկ Շվեյցարիա-յից հմուտները—պանրը ստացվում է եղել վատ, անհամ և չուտ փչացող: Այդ անաղոտութեան գագաթնքը ծածկված է Շվեյցարիայի և Եդի-մօնօլի տեղական պայմանները զանազանութեան մէջ: Եթէ Եդիմօնօլում կարելի լինէր ստեղծել Շվեյցարիայի դիրքն ու տեղը, նրա կանաչաւտ և լեռնային ձոր արտաները, նրա գեղեցիկ գա-րունները ու թարմ ամառները, նրա վճիռ աղ-բիւրները և զովացնող հովիտները, նրա գիւղա-կան ժողովրդի անսանապահական հմտութիւնը—այն ժամանակ Եդիմօնօլումն էլ կարելի կը լի-նէր պատրաստել անուշահամ չվեյցարական պա-

Ըյս տարի մենք շատ բան չունենք աւելացնելու մեր ասած-ների վրա, միայն կրկնում ենք որ մեր թէ գաւառական թղթակից-ների մեծ մասը և թէ Ռուսաս-տանի մայրաքաղաքների մեր թղթ-թակիցներից ոմանք մինչև այժմ կատարելապէս չեն ըմբռնել մեր տուած պրօգրամը:

Մեր թղթակիցներից շատերը, այո՛, կատարելապէս հետեւում են մեր տուած պրօգրամային և շատ նիւթաւոր գրվածներ են ուղար-կում, բայց մեծ մասը դարձեալ

նիր: Եդիմօնօլի նման տեղի ճահճային և աղ-քատ մարգագետինները, փոփոխական եղանակ-ները, ի հարկէ չեն կարող չը վնասել այնպիսի պանրի պատրաստութեան, ինչպէս դիւրափո-փոխ չվեյցարականն է: Այդ է պատճառը, որ այժմ կաթնատնտեսական ուսումնարանում պա-տրաստում են ըստ մեծի մասին անգլո-ամերի-կական չէստ եր անուշամած պանրը, որ աւելի հեշտութեամբ մի քանի անգլո-ամերիկացիներ է տանում և աւելի շուտ պատրաստվող է:

Մի այնպիսի երկրում, ինչպէս Կովկասն է, որ սկսած ամենաաղքատ և մեղի ժայռերի տխուր տեսարաններից բացվածքներում է իր բնութիւնը մինչև զրաւտալայել լեռնավայրերը և հրաշա-ղեղ հովիտները—մի այդպիսի բազմազան ու հա-րուտ երկրում չէ կարելի, որ չը յաջողվէր չվեյ-ցարական պանրի պատրաստութիւնը: Մինչև այժմ եղած փորձերը շատ բաւականացուցիչ են, պանրը ստացվում է նոյնպէս լաւ, ինչպէս իսկ չվեյցարականը և շատ տեղերում պանրագործ-ների անհմտութեան պէտք է վերաբերել անա-ղոտութիւնը, կամ տեղային մի քանի այնպիսի առանձնութիւններին, որոնց ներկայութիւնը չէ մուսկուլում նոյն իսկ Շվեյցարիայի զանազան մասերում:

Եւրօպական պանրները շատ զանազանվում են կովկասի տեղական պանրներից թէ իրանը պատրաստութեան և թէ համով: Մինչդեռ Կով-կասի պանրը իր պատրաստութեան համար պահանջում է շատ քիչ միջոց 1—3 օր, Եւրօ-պայինը ընդհանրապէս մի ամսից մինչև մի տա-րի և աւելի ժամանակ: Եւրօպական պանրները ի հարկէ աւելի կատարելագործված են իրանց գիմացկանութեամբ, ներքին աւելի մեծ փոփո-

յցնում են իրանց նամակները գըլ-խաւորապէս լոկ դատողութիւն-ներով և փիլիսօփայութիւններով, առանց շոշափելի և իրական փաս-տերի...

Մենք կրկնում ենք՝ թղթակ-ցից պէտք է պահանջել փաստեր, միմիայն փաստեր, իրողութիւն-ներ, պատահած անցքեր, եղած անցքերի նկարագրութիւններ, ի-րական նիւթաւոր հաղորդութիւն-ներ: Եւ այդ հաղորդված անց-քերը, փաստերը, իրողութիւն-ները պէտք է վերաբերվեն հա-սարակական կեանքին, հասարա-կութեան համար հետաքրքրելի և նրա համար նշանակութիւն ու-նեցող իրողութիւններին և ոչ թէ անձնական երեւոյթներին:

Թող գրեն այն բոլոր անցքերի և երեւոյթների վրա, որոնք պա-տահում են թէ հասարակու-թեան և թէ բնութեան մէջ, թող հաղորդեն լոկ իրողու-թիւններ, անցքեր, թէ կուզ մի-միայն լուրերի ձևով:

Դատողութիւններ և փիլիսօ-փայութիւններ միայն այն ժամա-նակ նշանակութիւն ունեն, երբ նրանք հիմնվում են հաստատ ի-րողութիւնների և անցքերի վրա: Բայց մեզ շատ անգամ պատա-

խութեամբ և աւելի շուտ մարտողականութեամբ և հէնց այդ յատկութիւններով վեր են մերկց-բայց և այնպէս, կարելի է ասել, որ մեր պա-նրը մի քանի դէպքում այժման պայմանների ներկայութեան ժամանակ ունի աւելի նշանակու-թիւն, քան եւրօպականը: Մշակ դասի համար մեր պանրը գոց է աւելի յարմար է, որովհետեւ մեր կարծիքով Կովկասի պատրաստած պանրը աւելի գոտաւարմար է և ուրեմն աւելի երկար ժամանակ է պահպանում մշակին քաղցից, կրկին ուտելու ցանկութենից: Դա մի կարծիք է, որ սպասում է ուրիշների կողմից հաստատութեան:

Չ և ստեղծ, որ այժմ փոխարինել է չվեյցա-րական պանրը, անուշամած է նաև անգլո-ա-մերիկական, որովհետեւ դա անցկական պանրը և Ամերիկայում կատարելագործված: Կատարելա-գործութիւնները ունեցել են երկու նպատակ գլխաւորապէս. առաջինը պանրագործութիւնը, որչափ կարելի է չինել մեղեկական, հաստատ պիտանական, քիչ կախումն ունեցող մարդու ան-ընդհատ միջամտութենից ու հսկողութենից և երկրորդ աւելի քիչ ժամանակում հասցնել պա-նրը, վերջացնել նրա մէջ հարկաւոր քիմիական և ֆիզիքական փոփոխութիւնները, որ կարելի լինի աւելի շուտ վաճառանոց տանել և ուրեմն գրամագուրի դարձնել: Անցկայում չինվող չէս-տերը նախապեսական միջոցներով էր պատրաս-տվում, զանազան փոփոխութիւնների կատարումն իմացվում էր մեղմաւորաբար և ենթակված էր վարպետի իրան սեփական առանձնութիւններին, նրա հմտութեան և ջանք ու եռանդի աստիճա-նին: Մինչդեռ ամերիկական եղանակը արդէն ուղիղ որոշել է այս և այն պայմանը, նշանակել է տաքութեան հաստատ աստիճաններ, այս և

հում է ստանալ նամակներ բոլո-րովն զուրկ փաստերից և միմիայն դատողութիւններով լցված:

Մենք հաւատացնում ենք մեր թղթակիցներին որ եթէ մեզ կը հաղորդվեն հաստատ հասարակա-կան և կենսական իրողութիւն-ներ, կը հաղորդվեն փաստերի հարուստ պաշար, — խմբագրու-թիւնը ինքն կիմանայ դատողու-թիւններ անել և եզրակացութիւն-ներ դուրս բերել հաղորդված իրո-ղութիւններից և հասարակական անցքերից:

Տեղագրական և ազգագրական նկարագրութիւնների մէջ նոյնպէս ցանկալի է որ գլխաւորապէս յայ-տնվել իրական, դրական կողմը, շրջապատող երեւոյթների ճիշդ դի-տողութիւնը և նկարագրու-թիւնը, բայց ոչ թէ տիրապետի ան-ձնական հայեացքը: Մեր նամա-կագրութիւնների մեծ մասի մէջ, կրկնում ենք, գլխաւոր դերը խա-ղում են ոչինչ հաստատ փաստերի վրա չը հիմնված երկար ու բա-րակ դատողութիւնները:

Փաստեր, միմիայն փաստեր հաղորդեցէք մեզ: Խմբագրու-թիւնը ինքն կը կարողանայ այդ փաստերից եզրակացութիւններ դուրս բերել:

այն գործողութեան համար հարկաւոր ժամեր, րօպէներ...

Չ և ստեղծ արտաքին տեսքով կարմրագոյն է, որովհետեւ կաթի մէջ նախապէս խառնում են օրլեան անուշամած ներկը, թէ և այդ ներկը վնա-սակար չէ, ինչպէս մի անգամ ևս յիշած ենք, բայց եթէ կարելի լինէր թողնել նրան, դարձեալ մի աւելորդ ծախսից աղքատված կը լինէինք և ապահովված այն խարդախութիւններից, որ ա-նում են ներկ ծախողները: Այժմ յանկարծ միան-գամից վերացնել ներկը անկարելի է, որովհետեւ գնողների աչքը սաստիկ սովորել է պանրի դեղնա-կարմիր գոյնին: Բողբներ և յանդիմանութիւն-ներ ներկի վերացման առիթով շատ և շատ են լսվում թէ Անգլիայում և թէ Ամերիկայում, բայց երկար քաղաքները շատ քիչ ազդեցու-թիւն են կարողացել անել: Ամօթ չէ մեր դարին, ասում է ամերիկացի մի գրող, որ մենք կամաւ խաբենք մեր աչքերը և այն կերպովորը որից պէտք է պահանջել անդադարութիւն ու մաքրութիւն միայն, մենք աղտոտնք զանազան ներկերով, թէ ինչ է մեր զգայարանքի վրա դա-րա տպաւորութիւն է անում... Հաստատ կա-րելի է ասել, որ ներկված պանրը դեռ շատ ժամանակ աւելի թանկ կը ծախվի և շատ ան-գոյնից, ուստի և շատ ժամանակ դեռ պանրա-գործները թող չեն տալ ներկի գործածութիւնը:

Չ և ստեղծ կարող է կովկասում մեծ աջողու-թիւն ունենալ, բայց թէ որչափ ձեռնառու կը լինի և յարմար—դա ճիշդ կերպով գեռ չենք կարող ասել, թէ և կարելի է կարծել, որ նա պէտք է ունենայ աւելի լաւ ապագայ, քան թանկագին և ուրեմն ըստ երեւոյթնե աւելի ձե-ռնուտ չվեյցարականը:

Ուրիշ բան են բանասիրական
յոդուածները: Բայց ամեն մարդ
այդ տեսակ յոդուածներ չէ կա-
րող գրել: Բայց և այդ տեսակ
յոդուածներ ոչինչ արժէք չունեն,
եթէ հիմնված չեն հաստատ իրո-
ղութիւնների, պատահած փառա-
տերի վրա:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի 21-ին, երեկոյեան 6 ժամին, Նորին
կայսերական Բարձրութիւնը կողմանա-
նալ փոխարքան և Նորին կայսերական Բարձրու-
թիւնը Մեծ Իշխանուհին, Նիկոլայ Միխայլովիչ
Մեծ Իշխանին և Անատոլի Միխայլովիչ Մեծ
Իշխանուհուն հետ ուղևորվեցան զէպի Ս. Պետեր-
բուրգ:

«Труды Вѣстн.» լրագրին հաղորդում են, որ
Էրզրումի հայոց մայր եկեղեցում մարտի 19-ին
կատարվեցաւ պատարագ և հոգեհանգիստ Բ.
Մ. Շէկովիկովի յիշատակին: Եկեղեցում ներ-
կայ էին Սոգանլուղի զորաբանի հրամանատարը,
գեներալ Գէյման, հեծելազորքի զխաւորը, գեներ-
ալ Ս. Չալվաթաձէ, Էրզրումի նահանգապետ
Կուխտովսկոյ իր ամուսնու հետ, բաղմամբիւ պաշ-
տոնեաներ և մինչև հինգ հազար հոգի թիւրքաց
Հայաստանի մայրաքաղաքի բնակիչներից: Արքե-
պիսկոպոսը մի ճառ ասեց հանգուցեալ Շէկովի-
կովի կեանքի մասին և իր այդ ճառով այն-
պիսի տպաւորութիւն գործեց ժողովրդի վրա, որ
չառերը լաց էին լինում: Հոգեհանգստեան ա-
ւարտվելուց յետոյ բազմեցաւ ստորագրութիւն
Շէկովիկովի անուանով Էրզրումի բնիկ մի աշա-
կերտի համար ստիպէնդիս հաստատելու համար:

Քանի մի օր է որ կողմանեան սարերի ճանա-
պարհների վատութեան պատճառով Ռուսաս-
տանի հետ յարաբերութիւնները կտրված են:
Քանի մի օր է Ռուսաստանի փոստը չէ ստաց-
վում:

ԹելԱխիճ մեզ գրում են, որ այնտեղ արդէն
սկսել են ասեղնակայի գործը. տեղական պը-
րիստավը կարգադրել է, որ բոլոր բնակիչները
մաքրեն իրանց բակերը և ուրիշ անմաքուր տե-
ղերը: Տեղական պոլիցիան օրինակ ցոյց տալու

Առ հասարակ տասը մաս կաթից ստացվում
է մի մասը պանիր, ուրեմն կարելի է հաշուել
այդ համեմատական թիւը աչքի առաջ ունենա-
նալով պանրագործութեան շահաւէտութիւնը:
Եթէ աւելելու լինենք Մոսկովայի սովորական գնե-
րը այսինքն պողոթ 8—16 ռուբլ, կը նկատենք,
որ պանիր օգտաւէտութիւնը աւելի է քան իւ-
ղինը: Չը նայելով դրան շատ տեղերում պանիր
գործարանները փակվում են, իսկ իւղինը աւե-
րկ բացվում: Կրա պատճառը պահանջի և սպառ-
ման զանազանութեան մէջ պէտք է որոնել և
պանրի աւելի ու երկայն պատրաստութեան մէջ:

Կաթնամտեսական ուսումնարանում բացի
յիշած պանրից պատրաստվում են ֆրանսիական
պանիրներ, որոնք ըստ մեծի մասին պատ-
կանում են կալորի անուանված տեսակին:
Դրանք քիչ քանակութեամբ են շինվում և այն
էլ մայրաքաղաքի ժողովրդի մի քանի ընտա-
նիքների համար — դա արիստոկրատական մի
բան է: Ես ծանօթացայ Բրի, Նիշաթի և
Քամամբեր անուանված պանիրների պատրաս-
տութեան հետ: Ֆրանսիական պանրագործու-
թիւնը մեծ ծախքեր, թանկ մեքենաներ ու չի-
նովածք չէ պահանջում, մինչդեռ Չեստերը ար-
դէն կարօտ է չոգեչարմ մեքենայի միջամտութեան
կամ թէ մի քանի այնպիսի յարմարութիւնների
որ կարողանային մասամբ փոխարինել սրանց:

Գալով այդ պանիրների առհասարակ պատ-
րաստութեան մեղանում պէտք է ասել, որ ոչ
մի եղանակ չէ կարելի ամբողջապէս տեղափո-
խել Կովկաս: Պէտք է ունենալ հմուտ ու տե-
րեակ պանրագործներ, որոնք տեղական պա-
մանների առանձնութիւններին կարող լինեն
յարմարվել և համապատասխան փոփոխութիւններ

համար մաքրել է տուել բուլվարը և երեք օրից
յետոյ հաւաքած աղբը այրել է: Այս օրինակին
հետեւել են բոլոր բնակիչները: «Մի քանի օր
չարուհակ, գրում է նամակագրը, մեր քաղաքը
նման էր Սոօմ և Գոմօրին»:

ԹելԱխիճ հաղորդում են, որ սպանդանոցը
իր գործունէութիւնը սկսեց նրանով, որ փո-
ղոցներու և բաց է անել տուել կալուածատե-
րերի գետնափոր խողովակները մաքրելու համար
օր ցերեկով, որտեղից բուրում են սաստիկ գոր-
շահոտութիւններ:

Կոնդիտեր Տէր-Յովհաննիսեանցի ջաղացում
ջաղացապանը անդուշտութեանը ընդգծել է անխի-
տակ և սաստիկ չարարվելով վախճանվել է:

ԹելԱխիճ հաղորդում են, որ սպանդանոցը
քաղաքի մէջ է գտնվում: Արեւն և անմաքուր-
թիւնները վարչահոտութիւն են տարածում քա-
ղաքի մէջ և հիւանդութիւնների պատճառ են
լինում:

ՋԱԼԱԼ-ՕԳԼՈՒՅ մեզ հաղորդում են, որ այն-
տեղ բաւական փող են հաւաքել յօգուտ գաղ-
թակաների, բայց նուիրատուներին յայտնած չէ,
թէ ունեն հասցրել այդ փողերը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՍՏՐԻԱ

Աւստրո-Ունգարական դէկլարացիաները հա-
մագլորվում կոմ Վնգրաշին խօսքերից թէ նրա
քաղաքականութիւնը չի փոխի աւստրո-ուն-
գարական շահերին, միաձայն որոշեցին 60 մի-
լիոն գուլդէնի կրեդիտը: Անգրաշին կոմսը ա-
սած է որ կառավարութիւնը 60 միլիոն կրե-
դիտը առաջարկում է ոչ Բոսնիան գրաւելու
և ոչ իր զօրքերը անմիջապէս մօբիլիզացիա
անելու, այլ հարկաւոր դէպքում աւստրո-
ունգարական շահերը պաշտպանելու նպատա-
կով: Աւելացրել է որ եթէ ոմանք կարծում
են թէ զօրաբանակը մօբիլիզացիա անելու ժո-
մանակը անցել է, այժմ ինքն դրան հակառակ
տեսնում է որ դեռ շատ վաղ է: Յայտնել է
նաեւ որ աւստրո-ունգարական շահերը արդէն
պատերազմից առաջ յայտնված են Ռուսաս-
տանին և ռուսաց կառավարութիւնը ընդու-
նած է նրանց օրինաւորութիւնը: Ունգարա-
կան դէկլարացիայում 60 միլիոն կրեդիտի ա-

մոցնէին տեխնիկայի մէջ: Միւս զլխաւոր պայ-
մանը, որ պէտք է միշտ աչքի առաջ ունենալ
այն է թէ ինչ նպատակով է պանիր շինվում:
տեղական գործածութեան թէ արտասահման
տանելու համար: Մեր երկրում մեծ դիրքով պան-
րագործութիւն սկսողը ի հարկէ պէտք է առա-
ջին անգամից արտասահմանութեան վրա մտածի:
տեղական պանիրները դեռ շատ ժամանակ
իրանց էթանութեամբ և ընդհանուր տարածմամբ
պէտք է մրցեն նորի հետ: Եւրօպական պանիր-
ների ներմուծութեան գործը պէտք է աշխատել
բոլորովին վայր ձգել: Ներքին վաճառանոցնե-
րում տալով նրանց տեղը նոր պանիրներ, ար-
տաքին վաճառանոցներում թէ Եւրօպայում և
թէ Ասիայում մեծ քանակութեամբ առաջարկել
մեր պանիրները: Այդպիսի մրցութեամբ մենք մի-
կողմից եւրօպացիների մեղնից ծծած հարստու-
թիւնը մեր երկրացիներին ենք դարձնում, միւս
կողմից մեր մթերքի աւելորդը հանելով բերում
ենք մեր երկրը ոսկի կամ այնպիսի առարկա-
ներ, որոնց արդիւնաբերութիւնը մեզ համար
անկարելի է, իսկ գործածութիւնը անհրաժեշտ...
Սև ծովի արգելեան և հարաւային ափերը
պէտք է դրաւեն մեր առանձին ուղադրութիւնը
առ այժմ իրանց վրա, քանի որ երկրի մէջը
ըստ հաղորդակցութեան յարմար ճանապարհներ
չունենք: Այդ ափերի միայն յարմար դիրքը չէ
նրանց նշանակութիւնը տուողը, այլ և մարգա-
րաքանդակ ու արօտները հարստութիւնը:

Պանիրը արգել է պատրաստված, վերջնական
կերպարանք ստացած մթերք է. մեր վաճառած
պանիրը այնուհետև չէ կարելի նոր փոփոխու-
թիւնների ենթարկել, նոր տեղը նրան տալ, նոր
զին աւելացնել: Այդպէս պէտք է վարվել ընդ-

առաջարկութիւնը ընդունվել է հետեւալ բա-
ռերով՝ «Եթէ պատահի որ արեւելքում կա-
տարված գէպերի վերջին կարգադրութիւն-
ների պատճառով անխախելի և ստիպողական
լինի աւստրո-ունգարական զօրքերը մօբիլի-
զացիա անել տեղութեան շահերը ազգու կեր-
պով պաշտպանելու համար, ընդհանուր մի-
նիստութեանը իրաւունք տրված է—այնու-
ամենայնիւ մինիստրութիւնը պարտաւոր է
դիմել պարլամենտական ժողովների գործակ-
ցութեանը, ինչպէս որ օրէնքը պահանջում
է, և համաձայնվել տեղութեան երկու մա-
սերի կառավարութիւնների հետ—այդ մօբի-
լիզացիայի համար իր սեփական պատասխա-
նատուութեամբ հարկաւոր եղած ծախքերը
անել մինչև 60 միլիոն գուլդէնի չափ: Հար-
կաւոր է վճարել այս գումարը սահմանադրա-
կան օրէնքից որոշած կերպով»:

Բայց այդ 60 միլիոնի կրեդիտից՝ կառա-
վարութիւնը առաջարկած է աւելացնել 1878
թւի բիւժէթի վրա 3 միլիոն գուլդէն պա-
տերազմական մինիստրութեան արտակարգ
ծախքերի համար, 727,600 գուլդէն ծովա-
յին ծախքերի համար և վաւելացնել 7 մի-
լիոնի ծախքը որ եղած է Բոսնիայի և Հեր-
ցեգովինայի գաղթականների համար:

Թէպէտ կոմ Վնգրաշին միշտ խաղաղափ-
րական յայտարարութիւններ է անում, բայց
Վիեննայից գրված թղթակցութիւններին նա-
յելով, կէս միլիոն զօրքի համար առաջարկու-
թիւն և պաշարեղէնի պատրաստութիւններ են
լինում:

«Standart» և «Times» անգլիական լրագիր-
ները հիմնվելով Վիեննայից ստացած հեռա-
գիրների վրա, ասում են թէ Աւստրիան եր-
բէք չի հաւանի որ բօլշարական իշխանու-
թիւնը տարածվի մինչև Նիդերլանդներ և ռու-
սները 6 ամիսը աւելի մնան Բօլշարիայում:
«Kölnische Zeitung» լրագրում Պէշտից գրը-
ված մի նամակ ասում է թէ աւստրո-ունգա-
րական շահերը 7 կէտերից են բաղկանում:
Առաջին չորս կէտերն են. 1. Բօլշարիան
պէտք է որ չուտով դատարկվի ռուսաց զօր-
քերից մինչև Բօլշարական ծովազերեայ սահ-
մանը: 2. Բօլշարիայի հարկատու ինքնավա-
րութիւնը տարածվի մինչև Բալկանը միայն:
3. Բօլշարիայի երկրորդական տեղութիւնը
(?) Բ. Դրան իշխանութեան ներքև մնայ: 4.
Երբ մի յեղափոխութիւն պատահի, Աւստ-
րիան իրաւունք ունենայ զբաւել Սերբիան,

հանրապէս և այն բոլոր նիւթերի հետ, որոնց
վերջնական ձև տալը աւելի շահաւէտ է, մի և
նոյն ժամանակ աշխատելով, որչափ կարելի է
կատարելագործել տեղական տեխնիկան: Պանիր
կարելի է իր առաջվայ ձևով, այսինքն ուղիղ
կաթը, արտասահման ուղարկել: Հնարար է ու-
ղիղ կաթը այնպէս, ինչպէս կթում են դժուար
է, բայց վերջին ժամանակներս գտել են միջոց-
ներ, որոնք համարեա թէ հասցնում են այդ հե-
տեանքին: Կաթը առանձին կաթնասնեում թան-
ճրացնում են և առանձին փողբիկ փակ աման-
ներում վաճառում: Եվեցյալից ցածր եկած այդ-
պիսի կաթը մի երկու ամիսը յետոյ գնում են,
աւելացնում են այնքան ջուր, որչափ չոգիացած
է թանճրացնելու ժամանակ և դարձեալ ստա-
նում են առաջվայ կաթը մի և նոյն համով, և մի
և նոյն սերի քանակութեամբ, մի և նոյն երես
տալով տաքացրած ժամանակ: Թանճրացած կաթի
պատրաստութիւնը մեզ համար դեռ շատ դժուար
է և նրա վրա թող առ այժմ նայենք, իբրև ան-
գործագրելի միջոցի վրա: Մեր քաղաքներում
դեռ կաթի այնքան մեծ պահանջ չը կայ և նրան
բաւականութիւն տալը կարելի է մտաւայելից
այն ամանների միջոցով, որ սկսվել են գործ ած-
վել Եւրօպայի շատ տեղերում:

VIII

Մշակ դասի դրութիւնը շատ քիչ տեղերում
կարելի է համարել փոքր ի շատէ բաւականա-
ցուցիչ: Արեւմտեան Եւրօպան բացառութիւն
չէ կաղմում: Նրա քաղաքակրթութեան վրա իբրև
նախադէպ արեւմտային տաւերով դրոշմված են
պատկերվում և պրօլետարիատ բառերը: Նա հիմ-

Բոսնիան և Հերցեգովինան: Մնացած երեք
կէտերը դեռ չեն յայտնված:

Անգրաշին կոմսը, ունգարական դէկլարացիայի
երկրորդական մասնաժողովներում, մի հար-
ցումի պատասխանելիս ասել է թէ՝ Թիւրքիան
կամենում է նկատել Դունայ գետին ոչ թէ
իրեւ մի այնպիսի գետ որի վրա նաւագնա-
ցութիւնը ենթարկված կը լինի որոշված
պայմանագրութիւնների, այլ իբրև մի սահ-
մանագրուի և մի պաշտպանողական գիծ որ
պատկանում է իրան: Բայց Աւստրիան չէ
կարող ընդունել Թիւրքիայի այդպիսի նկատու-
ղութիւնը:

Աւստրո-ունգարական կառավարութիւնը իր
կարմիր տետրակը հրատարակելով բաժանել է
Աւստրիայի և Ունգարիայի դէկլարացիաներին:
Չորս տարի է որ Աւստրիայի կարմիր տետ-
րակը չէ հրատարակվել: Այդ տետրակում, որ
700 երեսներից է բաղկանում, հրատարակ-
ված են բազմաթիւ դժուարութիւններ որոնցից
շատ հին թւական ունեցողները գրված են
1873 թւին, իսկ ամենանոր թւական ունեցող-
ները Կ. Պոլսի կոնֆերանցիայի վերջացած ժա-
մանակ: Այդ դժուարութիւնները մեծ արժէք ու-
նեն այս պատերազմի պատճառները ուսում
նասիրել կամեցող համար: Որչափ ապար-
դիւն աշխատութիւններ են եղել որ այս պա-
տերազմը չը լինի: Թիւրքերը իրանք չափից
աւելի աշխատել են իրանց կործանումի հա-
մար:

Այն լուրը որ տարածվել էր եւրօպական
լրագիրներում թէ թիւրքաց բանակին ծա-
ռայող լեհացի և ունգարացի աւստրիա-
հպատակ վերաբոյժներ ռուսների մօտ գերի
գտնվելով կոտորվել են, բոլորովին սուտ է ե-
ղել: Կնքն մինիստրների նախագահը, իշխան
Աուէրսբէրգ, յայտնած է դէպուտատների ժո-
ղովում որ հէնց լսել է այդ լուրը, իսկոյն
քննութիւն է սկսել և յայտնվել է որ բոլո-
րովին սուտ է: Դէպուտատները ծափահա-
րել են իշխան Աուէրսբէրգի հաղորդած ու-
րախառնից այդ լուրը լսելիս:

Հեռագիրը լուր բերեց որ Աւստրիայի կայ-
սրի հայրը, արքիդուքս Ֆրանց—Կարլ մե-
ռել է: Նա չէ կամեցել իր եղբոր Ֆէր-
դինանդ I-ին յաջորդել երբ Ֆէրդինանդը թա-
գաւորական հոգեւորից յոգնած և հիւան-
դութեանց տկարացած, հրաժարվեց զահից
1848 թւի դեկտեմբերի 2-ին: Նոյն օր ար-
քիդուքս Ֆրանց—Կարլ որին վերաբերում

նել է իր չինվածքը այն աշխատող դասի ուսերի
ու ձեռքերի վրա, որի գլխի ու բերանի անհրա-
ժեշտ կարիք ու պահանջները այնպէս վերաւո-
րական ձևով արհամարհում է: Մշակը չը գիտէ
կեանքի պերճութիւն, կեանքի կոմֆօրտ, նա ոչ
թէ զրկված է միայն լաւ բնակարանից, լաւ հա-
գուտից, այլ շատ անգամ օրական ուտելու հացը
նա անկարող է ձարել: Ամբողջ գրքեր, շարա-
գրութիւններ սկսած ամենամանրագիտ և վիտ-
նական գրվածքներից մինչև ամենահասարակ և
շատ անգամ ամենախղճալի մտքերի արդիւնա-
բերութիւններ, նուիրված են այս դասի վերաբե-
րեալ զանազան խնդիրների մշակութեան: Այդ-
տեղ գիտական թէ անգիտական մարդասիրու-
թիւնը աշխատում է ուղիղ թէ սխալ կերպով
նպատակ աշխատող դասի թէ նիւթական և թէ
հասարակական դրութեան բարձրանալուն:

Մի գիտնականի, որին շատ անգամ անդիտակ-
ցաբար աշխատում էր այսպէս կամ այնպէս պար-
զել մի օր և է խնդիր վերաբերեալ և մշակ դա-
սին, այս վերջինի ախոյեանների կողմից թափ-
վում էին առատ հնորհակալութիւններ ու գովա-
սանքներ: Գիտնականներին, որոնք աշխատում
էին և աշխատում են կերակրի և նրա սննդաբա-
րութեան խնդրին տալ բաղադրամասի լուծումն,
օրինակ բուսեղէններից պատրաստել խառ-
նուրդ, որ իր սննդաբարութեամբ հաւասար լի-
նէր մսին և ուրիշ այդ տեսակ նիւթերին, հաշ-
ւում են բարեբարների շարքում:

Այդ բոլոր ասածը ինչ յարաբերութիւն ու-
նի այն աւարկային, որի մասին մենք գրում
ենք, մտադիր ենք արդեօք մենք այդ խնդրը
արծարծել, քննութեան նիւթ չնենել...

Վնանել, հետազօտել աշխատողների խնդիրը այս

էր աւստրո-ունգարական թաղի ժողովուրդը իրաւունքը, հրաժարելը այդ իրաւունքից և իրան յաջորդեց իր անդամակի որդին Ֆրանց-Յոզեֆի, Աւստրիայի այժմեան կայսրը որ այն ժամանակ 18 տարեկան էր: Այդ եղաւ ունգարական պատերազմի պատճառներով մին, որովհետեւ ունգարացիները չունէին իրան և կամեցան մի տեսակ հանրապետութիւն կազմել: Նրանից յետոյ արքիդուքս Ֆրանց-Կարլ երբէք չէ միջամտել քաղաքական գործերին և հետեւապէս իրան թշնամի էլ չէ ունեցել: Ամենացած և 1821 թ.ի ապրիլի 24-ին Բալթիկայի Սոֆիա իշխանուհու վրա և նրանից ունեցել է չորս որդի, որոնց մէկը Աւստրիայի այժմեան կայսրն է, և միւսներն են վախճանած Մաքսիմիլիան արքիդուքսը որ Մէքսիկայի կայսր եղած էր և ապստամբներից սպանվեցաւ, արքիդուքս Կարլ-Լուդովիկ և արքիդուքս Լուդովիկ-Վիկտոր:

Արքիդուքս Ֆրանց-Կարլ անուանի չէ եղած իբրեւ քաղաքագետ, բայց զովում են նրան իբրեւ զթաւրտ մարդ: Արքիդուքս վեց ամիս սուգ կանի:

ԹԻԻՐԻՒՄ

«Politische Correspondenz» լրագրին գրում են Կ. Պոլսից մարտի 8-ից հետեւելով: «Նկատել տեսնելով հաւատարմութիւնն Բ. Գուռը գիտաւորութիւնն ունի Սան-Ստեֆանոյում ստորագրած խաղաղութեան բնագրի հետ միասին հրատարակել խաղաղութեան պայմանները սկզբնական նախագիծը այն ձևով, ինչպէս որ գրաֆ Իգնատիւնը և Նիկիտիլը խմբագրել էին: Բ. Գուռը կամենում է ցոյց տալ թէ նրա հաւատարմատարները ինչպիսի նշանաւոր զինուորական կարողացան անել տալ ուսանելին: Ռուսներն ևս ի հարկէ իրանց կողմից ցանկանում են ցոյց տալ միւս պետութիւններին թէ որքան չափաւոր էին յաղթութեանից յետոյ իրանց պահանջների մէջ: Եւ ճշմարիտ ուսանելը շատ պակասեցրին իրանց պահանջները, այնպէս որ մի քանիսը այս բանը վերաբերում էին թիւրքերի ութ օրվայ կամաւորութեան և զինուորական չանելուն և որ այս կամաւորութիւնը առաջ էր գալիս օտար ազդեցութիւններից:

Ահմէդ Վէֆիկ-փաշան գալով ուստաց գլխաւոր բանակը գործերի գրութիւնը բոլոր

րովին փոխվեցաւ և մինչև անգամ վտանգաւոր դիրք տտացաւ: Ահմէդ-Վէֆիկ-փաշան ուստաց հաւատարմատարները ձեռնարկած նախագիծի մի քանի կետերի վերաբերութեամբ յայտնեց անպայման «non possumus»: Բայց որովհետեւ ուսանելին յայտնի էր թիւրքերի այդպիսի կամաւորութեան իսկական պատճառները, սրա համար սկսեցին նշանաւոր և օգտաւէտ զինուորական անէլ յաղթվածներին: Կարճ կերպով նկարագրելու համար այս զինուորական, բաւական է ասել որ ուսանելը թիւրքաց կայսրութեանը թողեցին Արիւս-Նոպոլը, որպէս կայսրութեան երկրորդ մայրաքաղաքը, նշանաւոր Սալոնիկ ծովափնայ քաղաքը և Մակեդոնիայի մեծ մասը, չը նախելով այն բանի վրա, որ այս մասի մի քանի նահանգներում բնակվում են հազարաւոր բոլգարներ: Ռուսաստանը մի և նոյն ժամանակ հրաժարվեց թիւրքաց թանկագին զբաղւոր նաւատորմը պահանջելուց և ժամանակաւորապէս Կ. Պոլսը գրաւելուց: Ռուսների այսպիսի զինուորական շատ լաւ տպաւորութիւն գործեցին թիւրքաց ազգաբնակչութեան ամեն դասակարգերի վրա: Ձէ կարելի մի և նոյն բանն ասել յոյների և հայերի վերաբերութեամբ, որոնցից մասնաւոր վերջինները, այսինքն հայերը, սաստիկ տրտնւում են, որ Ռուսաստանը չը խլեց բոլոր Հայաստանը թիւրքերից: Նոքա վախեւում են, և իրաւունք ունեն վախենալու, որ թիւրքաց իշխանութեան տակ միացած նրանց երկրի մի մասը, ուստաց արշաւանքի վերջնաւոր յետոյ, կը լքվի Ռուսիայից եկած դաշակաւորներով, որոնք նշանաւոր նեցուկ կը դառնան քուրդներին, հայերի այս դարեւոր և անհաշտ թշնամիներին: Այս հանգամանքը ի միջի այլոց առիթ տուեց հայոց պատերազմի դիմել մեծօրհնութեամբ Ալեքսանդր Նապոլեոն:

Բայց չը նայելով ուսանելի այսպիսի զինուորական, բոլոր գործը, համարեա խաղաղութիւնը կապելու ժամանակ, քիչ միտաց որ չը փոխվեց: Ահմէդ-Վէֆիկ և Սալվեֆ-փաշաները, տեսնելով որ ուսանելը այսպիսի նշանաւոր զինուորական են անուամբ, սկսեցին աշխատել որ էլ զինուորական անել տան և անխնայ գեր սկսեցին կատարել: Բայց այդ ժամանակ գրաֆ Իգնատիւնը համարեց թիւրքի դուրս եկաւ, նա ուղարկեց Կ. Պոլսի մի քանի կազմեց և թիւրքաց հաւատարմատար

ներին քաղաքը ժամ տուեց խորհելու, սպառնալով անյապաղ Կ. Պոլսը գրաւել Սան-Ստեֆանոյում գտնվող 40,000 զօրքերով: Միւս կողմից էլ Մեծ Իշխանը հրամայեց որ զօրքերը դուրս գան Սան-Ստեֆանոյից զինելու համար: Այս սպառնալքը ներգործութիւն ունեցաւ և թիւրքաց հաւատարմատարները խաղաղութեան պայմանագիրը ստորագրեցին: Նոյն երեկոյ խաղաղութեան ստորագրելու լուրը հասաւ Ստամբուլ, և պէտք է ասած որ շատ յարմար ժամանակ պատահեցաւ այդ բանը, որովհետեւ այս լուրը հանգրաւեցրեց թիւրքաց գրգռված ազգաբնակչութիւնը, որը մինչև այն ժամանակ յեղափոխական ցոյցեր էր անում և խռովարար թիւրքեր էր կոչեցնում զօրանոցների և մեղիքների պատերի վրա սուլթանի և կառավարութեան դէմ: Մահմադականների այդպիսի գրգռված դրութիւնը աչքի առաջ ունենալով քրիստոնեաները թէ ինչ գրութեան մէջ էին այդ շատ հասկանալի է: Կառավարութիւնը ստիպված էր նախազգուշութիւն անել և որոշեց որ զիշեր և ցերեկ քաղաքի փողոցներում դիշերապահ զինուորներ մանգան:

Խաղաղութեան ստորագրելու նոյն օրը Մեծ Իշխանը շնորհաւորեց ուստաց զեապաշտան թարգման պ. Սուրի միջոցով Ահմէդ Վէֆիկ-փաշային, իսկ միւս օրը գրաֆ Իգնատիւնը իր ամուսնի հետ միասին ուղևորվեցաւ Կ. Պոլս, ուր ամենից առաջ յունաց զեապան Կոնստանտինոս մօտ նախաձեռնեց: Յետոյ ամբողջ օրվայ ընթացքում գրաֆ Իգնատիւնը այցելեց իշխան Բէյսին, գրաֆ Յիւլի և գրաֆ Կորնիլին:

Սալվեֆ-փաշան էլ իր կողմից, միւս օրը շտապեց ներկայանալ Սուլթանին, ցոյց տալու քարտեզը, որի մէջ նշանակված էին բոլոր գրգռելի ապաղայ պետութեան սահմանները:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 մարտի: «Agence Russe» հիշում է այն լուրը, որ իբր թէ կոմ Իգնատիւնը յանձնարարութիւնը Վիեննայում չաջողվեց: Յանձնարարութիւնը նրա մէջն էր պարունակվում, որ բարեկամարար

բացատրվէր Սան-Ստեֆանոյի հաշտութեան էութիւնը առաջ քան թէ Աւստրիայի և Ռուսաստանի մէջ անհամաձայնութիւն կը լինէր: Յոյս կայ, որ վերջնական համաձայնութիւն կը լինի:

Կ. ՊՈԼԻՍ, 16/28 մարտի: Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայիւն աւելի երկար կը մնայ թիւրքիայում նրա հետ յարաւորական և պաշտպանողական դաշնագրութիւն կապելու համար: Այն լուրը, որ իբր թէ Սուլթանը չքանչան է շնորհել Մեծ Իշխանին ճիշդ չէ: 10/10, 16/28 մարտի: Լորդ Դերբի հրաժարական տուեց, որովհետեւ պահեստի զօրքերը հրաւիրվեցան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մարտի: Տրէպովն վերաւորելու գործը նշանակված է մարտի 19-ին դատաստանական քննութեան համար: 10/10, 17/29 մարտի: Կարծում են, որ Դերբիի փոխանորդը կը լինի Լայոնս կամ Սալվեֆի: Կարգադրութիւն է արած անյապաղ պատրաստել բոլոր բրիտանական և Հնդկաստանի պատերազմական տեղափոխող նաւերը գործող զօրաբաժինը տեղափոխելու: Լրագրիները գտնում են, որ Դերբիի հրաժարականը և պահեստի զօրքերի կանչելը ցոյց է տալիս Անգլիայի վճռողական ցանկութիւնը վերջ դնել բանակցութիւններին, պատրաստվել պատերազմի համար և տիրել Դարդանեւան նեղուցը, որ չը թոյլ տան ուսանելին Գալիպոլի պաշարել: «Morn. Post» լրագրը կարծում է, որ Անգլիայի վճռողական քաղաքականութիւնը կը փոխի Աւստրիայի գործողութեան եղանակը:

ՎԻԵՆՆԱ, 22 մարտի (3 ապրիլ): «Полоса» լրագրին Վիեննայից հեռագրում են հետեւելով: «Բոլոր պաշտօնական լրագիրները աւստում են, որ Աւստրիայի համար անհրաժեշտ է Անգլիայի հետ ձեռք ձեռքի տուած ընթանալ:

ԲԵՐԼԻՆ, 22 մարտի (3 ապրիլ): «Петербург. Вѣд.» լրագրին Բերլինից հեռագրում են, որ Դերմանիան հաւանում է Աւստրիայի քաղաքականութիւնը արեւելեան հարցի վերաբերութեամբ: Աւստրիայի և Անգլիայի մէջ համաձայնութիւնը կայացած են համարում: ՎԻԵՆՆԱ, 22 մարտի (3 ապրիլ): «Новое Время» լրագրին հեռագրում են որ Մարմարեան ծովում գտնվող անգլիական նաւատորմին անդադար օգնութիւններ են հասնում:

յօդուածում ոչ մի կերպ չէ կարող տեղի ունենալ ամբողջապէս. այլ նա ունի մի քանի կետեր, որոնք շատ սերտ կապակցութիւն ունեն մեր գրելի նիւթի հետ և որ կերակայ այս և միւս գրականութեամբ: Աւանդին մեծ յոյս չը տալու համար ընթերցողին, նախապէս ասենք, որ այդ կէտերից մէկը ընկերութիւնների (աստիճանային) գործադրութիւնն է կաթնատնտեսական արդիւնաբերութեան մէջ և միւսը պանրի, իբրեւ սննդաբար ու կամակեր ուտելիքի, նշանակութիւնը: Սկսենք վերջինից:

Մեր հայ մշակը առաւ հետը մի լաւաշ, պատառեց մէջը մի կտոր պանրի, կապեց նրան մէջքին և գնաց իր գործին: Պանրայէս նրա համար թանկ չէ, նրան շատ ձեռնառու է, աւելի յարմար ու մատչելի, քան օրինակ միսը: Մենք անցանք մշակի մօտով, նկատեցինք այդ երեւոյթը և դարձանք մեր սենեակը: մեզ հետաքրքրում է այն հարցը, թէ արդեօք մշակը սննդաբար ու առողջարար կերակուր է ստանում թէ ոչ, արդեօք մենք որ սովորած ենք բազմախորտիկ սեղանին, կարող ենք բաւականապէս մի այդպիսի կերակուրով թէ ոչ, բաւականապէս ոչ մեր ճաշակի նրբութեան, այլ մեր մարմնի պահանջին համապատասխանելու կողմից: — Հարցը վճռում ենք այս ու այն դէմքը տալով նրան. եթէ վիճողներս շատ ենք, համարում ենք այնպիսի ծայրայեղութիւնների, որոնց դէմ խոսում է նոյն ինքն իրականութիւնը, որ շատ անգամ մեր դատողութիւնների մէջ բոլորովին մոռացութեան է տրվում:

Պանիրը շատ վաղ ժամանակներից է մտել մեր ուտելիքների շարքը. իսկ այն նիւթի գործածութիւնը, որից նա պատրաստվում է, այսինքն կենդանիների կաթի, աւելի ևս խոր հնութիւններից:

Մարդիկը միշտ կաթը համարել են առողջարար ու սննդաբար կերակուր, և ինչպէս չը համարել յիւրաքի, երբ բնութիւնը ինքը նրան տալիս է իւրաքանչիւր կենդանուն, իբրեւ սկզբնական կերակուր—կատարեալ կերակուր, որ կարիք չունի ուրիշ յաւելուածների և ինքը մշակ բաւականապէս ունի ամբողջապէս մարմնի պահանջները:

Կարելի կը լինէր հենց այժմանից եզրափակել թէ՛ և պանիրը, որ պատրաստվում է կաթից սննդաբար ու առողջարար պէտք է լինի, եթէ մեզ չառաջարկէին այս տեսակ հարցեր. թէ արդեօք կաթի բոլոր մասները ամբողջապէս գտնում են պանրի մէջ և թէ պանրի ձև ստանալը ինքն ըստ իրենքան իր ներքին փոփոխութիւնների, իր քիմիական բաղադրութիւնների կողմից, արդեօք միասնաբար չէ: Այնպէս քաղաքականութիւնը:

Եթէ վեր առնենք փոքր ինչ կնոջ կաթ և փոքր ինչ էլ կովի կաթ և համեմատենք երկուսի համը, մենք կը նկատենք, որ կնոջ կաթը աւելի քաղցր է, քան կովինը: Այդ նրանիցն է, որ կամ թէ մէջ կայ շաքար, մեր սովորական շաքարին շատ նման: Այդ շաքարի որքանութիւնը մի և նոյնը չէ ամենայն կաթում. կնոջ կաթում աւելի է քան կովի: Այդ պատճառով, եթէ մեր յարգելի մայրերը կամենում են իրանց կաթը փոխարինել կովի կաթով, պէտք է անպատճառ փոքր ինչ շաքար աւելացնեն կովի կաթի մէջ: Բնական պահանջին բաւականութիւն տալու և ոչ թէ լոկ քաղցրահամ շինելու համար, իրանք մայրերն էլ նկատած կը լինեն, որ երբ նրանք ժլատանում են, շաքար չեն գտնում, կաթը չէ մարմնում երկնայի ստամոքսում և յետ է դարձնում:

Ուրեմն կաթի մէջ կայ շաքար. այդ խնդիրը պարզելու մի կողմն է բացայայտնք միւս կողմը:

Եթէ վեր առնենք մեր ամենօրեայ գործածական հացը, փոքր ինչ ծամենք ու բերաններումս պահենք, չուտով մենք կը զգանք քաղցրութիւն հացի մէջ. Մի և նոյն էլ կը պատահի եթէ առնենք ինքնք գետնախնձոր կամ մի ուրիշ օսւլային պտուղ: Այդ քաղցրութեան պատճառը դարձեալ չաքարն է, որ թթի ազդեցութեան տակ ստացվում է հացից ու գետնախնձորից: Ստամոքսում այդ շաքարի որքանութիւնը ուրիշ հիւթերի ներգործութեան անկի ևս չառաւում է: Այս տեղեկութիւններից յետ դառնանք պանրին:

Կաթի բոլոր մասները մտնում են կաթի մէջ, բացի կաթնային շաքարից: Այնպէս որ դատարկ պանիր ուտելը չէ կարող սննդաբար համարվել. իսկ եթէ գործածենք նրան օրինակ հացի հետ՝ այն ժամանակ այն շաքարը, որ այնտեղ պակաս էր, կը տրվի հացից և կաթի համաչափութիւնը կը վերականգնուի: Մեր վերջացին հենց այդպէս էլ անում է առանց գիտնալու քիմիական փոփոխութիւնները և մեր գիտնական բացատրութիւնները:

Հացից շաքար ստացվելուց յետոյ ընթերցողը կը հետաքրքրվի իմանալ թէ կաթը ինչ փոփոխութիւն կը ստանայ ստամոքսում, քննենք և այդ, մասնաւոր, որ դա վերաբերում է տարակուսանքներից մինի ցրելուն: Եթէ հորթին կաթը ուտելուց մի երկու ժամ յետոյ նրան մորթենք և ճղենք նրա ստամոքսը—մենք կը նկատենք, որ կաթը մի և նոյն կերպարանքն է ստացել, ինչ որ ունենում է նա կաթից պանիր շինելու ժամանակ,

երբ արդէն մայր է զգված: Այնպէս որ մեր գործածվող պանիրը կաթի շատ բնական և օգտակար փոփոխութիւնն է ներկայացնում և մենք նրան գործածելով հացի կամ մի ուրիշ դրաման ուտելիքի հետ մի և նոյնն է թէ ուղիղ ընդունում լինէինք կաթը—համարեա թէ, Պարոն Արեւոյդի հայրենիքին նայած մի ֆունտ պանիրը 1/2 ֆունտ հացի հետ իր սննդաբարութեամբ հաւասար է 2 ֆունտ մսին: Յիշենք և այն, որ պանիր շինելու համար մայր վեր են առնում հորթի ստամոքսից:

Առհասարակ տարածված է մի այնպիսի կարծիք թէ պանիրը շատ մարական է ոչ թէ միայն ինքը, այլ և նպաստում է առհասարակ մարսողականութեան: Ինչպէս երևում է, դա ևս ուղիղ է: Եթէ վեր առնենք պանրի կտոր ու զգենք նրան մաքուր կաթի մէջ, մի քանի ժամանակից յետ կաթը դարձեալ կը մայրվի, դարձեալ պանիր կը դառնայ, ուրեմն մայրացուի ազդեցութիւնը դեռ չէ կորած պանրից և նա ներգործում է իբրեւ ստամոքսի մասը:

Պանիրը շատ սննդաբար է, առողջարար և էփանագին: Այդ երեք յատկութիւնները նրան մեծ տեղ են տալիս կերակուրների շարքում և աշխատող դասի անհիւժ ու անզօր ուտելիքների մէջ սննդաբար տարր են աւելացնում:

Ի հարկէ երանի կը լինէր եթէ աշխատող դասը կարողանար նոյնպէս փոփոխել իր կերակուրները, շատ անգամ արժանանար և մի և միւս խորտիկներին....

(Կը շարունակվի)

10-10

10—10

2-10

2-3

2-3 (2)

Պատիւ ունի յայտնելու պ. պ. փաճառաւ
կաններին և սպառողներին, որ այդ գործա-
րանսով գործվում են և նորա մէջ միշտ մեծ
քանակութեամբ գտնվում են ամեն տեսակի
ԿՍՇԻՆԻՍ Կօշիկներ, Թամբուրի, Կումբուրի ա-
րուեստների համար և նոյապէս հօւմ կաշիների
Մեծ քանակութեամբ փաճառելը կատար-
վում է գործարանի կանտոնայում, որտեղ
ընդունվում են և պատուէրներ: Մաս մաս
ծախվում է Սիօիկ մայր եկեղեցու շիրմա-
գտնվող մաղաղկունու
1—25 (2)

16-ն մարտի 1878 թ.

2-3

1571

Վաղաբերա մեջ ստորագրվում են կարելի է պ. Ս. Մատուրանցի խանութում Երկրորդին խո-
ղցում, պ. Զ. Իրիզորեանցի և պ. Տեր-Ղևոնդեանցի գրափաճառանոցներում:

Խմբագիր և Տնօրէն ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Дозволено Цензурою 23 Марта 1878 г. Тифлисъ.

Типографія Мартиросіанца

Խմբագիր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷՒ